



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«22» մայիսի 2017 թ.

N 2-2017

**ք.Ստեփանակերտ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 22.05.2017թ. նիստի 2-2017 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2017թ. հունիսի 29-ին, ժամը 11:00-ին, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ն. Ստեփանյանի 35 հասցեում «Վալեքս Գարդեն» համալիրի մեծ կոնֆերենս սրահում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:  
Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2017թ. մայիսի 23-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
2. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել «Ասատրյանս» ՍՊԸ-ը, որպես 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձ:
3. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.
  1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում (զեկուցողներ - գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյան, տեխնիկական տնօրեն Արմեն Գասպարյան, ֆինանսական տնօրեն Ժան Հովհաննիսյան)
  2. 2016թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում
  3. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացում
  4. Ընկերության 2017թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում
  5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում

6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2016 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունների հաստատում
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2016 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն
9. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի ընտրություն
10. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի հաշվիչ հանձնաժողովի ընտրություն

4. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
5. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատաքների իրականացումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 22-ից:

**Խորհրդի նախագահ՝**

**Ս. Թևոսյան**